

Գ. ՀԱԿՈՐՅԱՆ

(Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի)

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ղ Ա *

Բ.— ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Տղայի կենսագրական տվյալները շատ սակավ են ու կցկտուր. դրանք ցրված են մեր պատմիչների գործերում և հիշատակագրաններում: Տղան եղել է Ներսես Շնորհալու Վասիլ եղբոր որդին. ծննդյան տարեթիվը հայտնի չէ: Ըստ հաղորդումների, երբ 1138 թվականին, Մովսիս ամրոցը սելջուկներից պաշտպանելու համար մղվող կռվում գերի ընկավ Վասիլը, Գրիգորը եղել է 13—14 տարեկան. նշանակում է նա ծնվել է մոտավորապես 1124 կամ 1125 թվականներին: Վասիլի գերութունից հետո, նրա եղբայրները՝ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը և Ներսես Շնորհալին, պատանի Գրիգորին վերցրին իրենց մոտ՝ Հայրապետանոցի դպրոցում կրթելու և դաստիարակելու նպատակով: Այստեղ նա ստացավ բազմակողմանի կրթություն, հմտացավ աստվածաբանական և աշխարհիկ գիտությունների մեջ, ծանոթացավ հելլենական դպրության ու արվեստին՝ կաթողիկոսարանում ժառանգող հույն գիտնական Կոստանդին հոգևորականի միջոցով: Բացի հոմարենից, նա լավ իմացել է նաև մի քանի ուրիշ լեզուներ: Գրիգոր Տուտեղորդուն գրած թղթերից երևում է, որ նա տիրապետել է պարսկերեն, ասորերեն և եբրայերեն լեզուներին: Իսկ թե ինչո՞ւ համար նա մինչև իր կյանքի վերջը կոչվել է «Տղա» մականունով, այդ մասին կան տարբեր ենթադրություններ:

Հ. Ղևոնդ Ալիշանը կարծում է, որ այդպես կոչել են Կաթողիկոսարանում սովորող Վասիլի տղա Գրիգորին՝ Շահանի տղա Գրիգորից տարբերելու համար, որովհետև երկու Գրիգորներն էլ ապրելիս են եղել Կաթողիկոսարանում:

Հ. Մ. Չամչյանը և ուրիշները ենթադրում են, թե «Տղա» է կոչվել նրա համար, որ շատ վաղ հասակից կաթողիկոս է ընտրվել: Վերջապես Մաղաբիա արքեպիսկոպոս Օրմանյանն էլ ասում է, թե այդ մականունով է կոչվել, որովհետև միշտ ապրել է Կաթողիկոսարանում և մեծացել որպես Կաթողիկոսարանի տղա: Արդյոք վերոհիշյալ երեք ենթադրություններից ո՞րն է հավանական: Մեր կարծիքով առաջին և երկրորդ ենթադրությունները անհավանական են: Ահա թե ինչո՞ւ Վասիլի տղա Գրիգորը, այսինքն Գրիգոր Տղան, տարիքով շատ փոքր է եղել Շահանի տղա Գրիգորից, որը հետագայում դարձավ Գրիգոր Ապիրատ անունով կաթողիկոսը:

Այն ժամանակ, երբ Գրիգոր Տղան տակավին պատանի էր, Շահանյան Գրիգորը, այսինքն Ապիրատը, 25—30 տարեկան գիտվորական էր հունական այբուենիքում, և որին Ներսես Շնորհալին մի ոտանավոր ձոնեց «Ան Ապիրատն ի Տէր Ներսէսէ բան շափա սա» վերնագրով: Ինչպես տեսնում ենք, երկու Գրիգորները հասակակից չեն եղել: Բացի այդ, Գրիգոր Շահանյանը «ի մանկուց տիրոց» ունեցել է «Ապիրատ» մականունը: Վերջապես, Ապիրատը երիտասարդ ժամանակ Կաթողիկոսարանի դպրոցում չի սովորել, որտեղ Գրիգոր Տղան էր:

Երկրորդ ենթադրությունն էլ անհավանական է. քանի որ Գրիգոր Տղան շատ վաղ հասակում չի ձեռնադրվել կաթողիկոս, այսինքն 19—20 տարեկան հասակում, ինչպես Շնորհալու մեծ եղբայրը՝ Գրիգորիս Պահլավունին:

Ինչպես տեսանք, Գրիգոր Տղան 1138 թվականին 13—14 տարեկան է եղել: Ներսես Շնորհալին կաթողիկոս է եղել մինչև 1173 թվականի օգոստոս ամիսը: Գրիգոր Տղան կարող էր կաթողիկոս ընտրվել Շնորհալու

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից:

մահից հետո, նշանակում է՝ 1173 թվականին նա եղել է ոչ թե 19—20 տարեկան կամ «ստիճ տղա», այլ շուրջ 40 տարեկան, հասակն առած մարդ: Հավանական ենք համարում երրորդ ենթադրությունը, որովհետև Գրիգորը փոքր հասակից միշտ ապրել է կաթողիկոսարանում, իր հորեղբայրների մոտ, թողիկոսարանում, իր հորեղբայրների մոտ, միշտ եղել է նրանց հետ, որպես նրանց հարգատ աղան: Անհավանական չէ, որ դպրոցում սովորող հասակակից ընկերները նրան անվանել են «կաթողիկոսի տղա»: Այստեղից էլ ժամանակի ընթացքում այդ բառը դարձել է մականուն և հավասարապես գործածվել Գրիգոր անվան հետ և դարձել հատուկ անուն: Ուրիշ որևէ հիմք կամ պատճառ չկա «տղա» մականունը Գրիգորին տալու համար: Գրիգոր Տղան, ինչպես և Մովսիս Ճյուղին պատկանող բոլոր Պահլավունիները, եղել է պարթևահասակ և գեղեցկատես: Ժամանակակից մի բանաստեղծ Գրիգոր Տղայի արտաքինի մասին հետևյալ երկտողն է գրել.

«... Այն որ Տղայն մակալոչեալ,
Յաղթանդամ էր և հաստատեալ...»³:

Իսկ Ներսես կամբարոնացին Շնորհալույն ընծայված «Գովհեստ»-ում գրում է այսպես.

«Սակայն Գրիգոր տէր սրբասնեալ,
Տղայ անուն գոլ մակադրեալ...
Շնորհիւ հանգոյն հարցըն գտեալ,
Այլ գեղ մարմնոյն գերազանցեալ»⁴:

Գրիգոր Տղան վարդապետի աստիճան ստացել է 1163 թվականին, իսկ հինգ տարի հետո, Շնորհալին տալիս Վ նրան եպիսկոպոսի աստիճան և դարձնում իր օգնականն ու տեղակալը:

1173 թվականի հուլիսին, Ներսես Շնորհալու վախճանվելուց մի ամիս առաջ, Կաթողիկոսարանը Տղային գործուղեց կամբարոն՝ Օշինյանների և Ռուբինյանների մեջ նորից վերանորոգված գծումթյունները վերացնելու և հաշտություն հաստատելու նպատակով: Երբ այդ տարվա օգոստոս ամսին Շնորհալին վախճանվեց, Գրիգոր Տղան դեռ կամբարոնից չէր վերադարձել: Եվ քանի որ նա կաթողիկոսի տեղակալն էր և բացակա, ուստի մինչև նրա վերադարձը տեղակալի պաշտոնը կատարում էր Գրիգոր Ապիրատը:

Այս հանդամանքը հիմք է հանդիսացել օտարազգի եկեղեցական պատմագիրներից ոմանց՝ գանազան ենթադրություններ հյուսելու Գրիգոր Տղայի կաթողիկոս ընտրվելու խնդրի շուրջը: Միխայել ասորի պատմիչը

կարծում է, որ Շնորհալու մահից անմիջապես հետո, Գրիգոր Ապիրատն է ընտրվել կաթողիկոս, իսկ որոշ ժամանակից հետո, Գրիգոր Տղան, իր փեսա Մլեհի և սուլթան Նուբարդինի միջոցով, կաթողիկոսի պաշտոնը Գրիգոր Ապիրատի ձեռքից ուժով է վերցրել: Ահա Միխայել ասորու խոսքերը. «Իսկ Տեան Ներսէսի կային երկու եղբոր որդիք եպիսկոպոսներ, Գրիգոր և Գրիգորիս անուանք նոցա. աւագ եղբոր որդին Տէր Գրիգոր էր մերձի վախճանին, վասնորոյ զՏէր Գրիգորիսն քարոզեցին կաթողիկոս... Իսկ յետ աւուրց եկեալ Տէր Գրիգոր և իմացեալ զիրքն, դարձաւ և գնաց առ փեսայն իւր Մլեհն և առեալ զնա տարաւ առ Նորադինն և ետին հրամաւնաւ ածաւ ի շոտմկլայն և ձեռնադրեցին զնա կաթողիկոս»⁵:

Միխայել ասորու հաղորդածները կաթողիկոսական վերոհիշյալ «վեճեր»-ի կամ Նուբարդինի «հրաման»-ով Գրիգոր Տղային կաթողիկոս դարձնելու մասին զուրկ են պատմական տրեւէ հիմքից և չեն համապատասխանում իրականութեան: Այդ շրջանի մեր և օտարազգի բազմաթիվ պատմիչների մոտ այդպիսի տվյալներ չկան. իսկ դրան հակառակ շատ փաստեր կան: Սմբատ Սպարապետը, Կիրակոս Գանձակեցին, Սամվել Անեցին, Հեթում պատմիչը, գրողներ Վահրամ Ռաբունին և Ներսես կամբարոնացին, սրանք բոլորն էլ միատեսակ հաստատում են, որ Գրիգոր Տղան կաթողիկոս է ընտրվել Ներսես Շնորհալուց անմիջապես հետո և ամբողջ հայ ժողովրդի ցանկութեամբ, առանց վեճերի ու դատի ուժերի միջնորդութեան կամ «հրաման»-ի Եղած բազմաթիվ փաստերից վերցնենք միայն հետևյալները. Սմբատը հաղորդում է, որ Ներսես Շնորհալին հոգեվարքի ժամանակ «պատուիրեաց նստուցանել յԱբառն զՏէր Գրիգորիս մականուն Տղայ»⁶:

Սամվել Անեցին գրում է. «Փոխի մահուանը առ Քրիստոս սուրբն Ներսէս և յաջորդէ զԱբառն Տէր Գրիգոր եղբոր որդին ետրին Տղայ կոչեցեալն ամս Ի»⁷: Վերջապես Ներսես կամբարոնացին «Գովհեստ»-ի մեջ, խոսելով Ներսես Շնորհալու մահվան ու նրան հաջորդող Գրիգոր Տղայի ընտրութեան ժողովի մասին, հետևյալն է գրում.

⁵ Միխայել Ասորի, «Ժամանակագրութիւն», Երուսղեմ, 1870, էջ 471—472 (այս և մյուս բոլոր մեջբերումների ընդգծումները մերն են—Գ. Է.):

⁶ «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի», Վենետիկ, Ս. Ղազար, 1855, էջ 10:

⁷ Սամուէլի քահանայի Անեցոյ, «Շաւարմոնք ի քրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 139 (այս և պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 139):

³ Վահրամայ Ռաբունոյ, «Պատմութիւն Ռուբինեանց», Փարիզ, 1859, էջ 218:

⁴ «Քուրթ ընդհանրական», Ս. էջմիածին, 1665, էջ 488—489:

«Ապա ժողով անթիւ եկեալ,
 Եպիսկոպոսքն անդ հիացեալ,
 Ընդ բազմութիւնն միաձայնեալ,
 Կաթողիկոս զընտրեալն օծեալ»⁸:

Եթե մի պահ ընդունենք, որ Միխայել Աստրու ասածները անհավանական չեն, և Գրիգոր Տղան կաթողիկոսի պաշտոնը բռնութեամբ է խլել Ապիրատից՝ Նուրադղինի հրամանով, դժվար թե վերևում հիշված հայ պատմիչներն ու գրողները, որոնք բոլորն էլ անարգանքով են հիշում Մլեհի և Նուրադղինի անունները, այդպիսի մի դեպքի մասին չհիշատակեն: Գրիգոր Տղան կաթողիկոսութուն արեց շուրջ քսան տարի՝ 1173—1193 թվականները: Տղայի վախճանվելու ճիշտ ժամանակի վերաբերյալ պատմագիրների և բանասերների գործերում տվյալները միատեսակ չեն: Սմբատ պատմիչը ասում է, որ Գրիգոր Տղան վախճանվել է 1193 թականի մայիսի 16-ին: Հ. Մ. Չամչյանը գտնում է, որ Տղայի մահը տեղի է ունեցել հուլիսին, առանց նշելու ամսաթիվը: Իսկ Հ. Ղ. Ալիշանը վերոհիշյալ տվյալների հետ համաձայն չէ, այլ գտնում է, որ կաթողիկոսի մահը պետք է դնել ոչ մայիսի 16-ին և ոչ էլ հուլիսին, այլ մայիսի 25-ին: Իհարկե, բոլորի կողմից էլ նկատի է առնվել հին տոմարը:

Թե ո՞րտեղ է ամփոփվել Գրիգոր Տղայի մարմինը՝ կարծիքները նույնպես տարբեր են: Փորձենք քննելով ճշտել Տղայի մահվան ժամանակը և թե իսկապես ո՞րտեղ է թաղվել նա:

1193 թվականի հունիսին, Լեոն Բ-ը Գրիգոր Տղային և Ներսես Լամբրոնացուն Հռոմկլայից ուղարկում է Սիս՝ կայսր Ֆրեդերիկ Շիկամորուսին դիմավորելու: Սակայն այդ հանդիպումը չկայացավ, որովհետև հունիսի 10-ին Ֆրեդերիկը Սելեկիայի Կալիկադոս գետում լողանալիս ջրահեղձ եղավ: Այդ օրերին Մամեստիայում էր գտնվում հիվանդ կայսրորդին: Վերջինս մխիթարելու համար Գրիգոր Տղան գնաց Մամեստիա: Մամեստիայից կաթողիկոսը ոչ թե վերադարձավ Հռոմկլա, այլ գնաց Սիս՝ Լեոնի մոտ: Այս դեպքերը տեղի էին ունենում 1193 թվականի հունիս ամսին, հետևաբար անկարելի է կաթողիկոսի մահը դնել մայիսի 16-ին կամ 25-ին: Այնուհետև, Ֆրեդերիկ Շիկամորուսի ջրամուլն լինելու օրն ու տարին օտար պատմիչների գործերում, մասնավոր թղթերում և հիշատակարաններում անվիճելի կերպով համարվում է 1193 թվականի հունիսի 10-ը:

Հ. Մ. Չամչյան իր տվյալները վերցրել է Սմբատ պատմիչից⁹, իսկ Հ. Ղ. Ալիշանը՝ մի

հիշատակարանից, որը ցույց է տրված «Սիսուան» գրքում¹⁰:

Ապա ի՞նչպես բացատրել վերևում բերված տարբեր տվյալները:

Մեր կարծիքով, Սմբատ պատմիչի մոտ և Հ. Ղ. Ալիշանի օգտագործած հիշատակարանում եղած սխալ տեղեկությունը հետևանք է գրիչների անզգուշության: Այսպես, մեր մատենագրության մեջ, ինչպես գիտենք, թվերը արտահայտվում են մեր այբուբենի տառերով: Մայիսը որպես հինգերորդ ամիս, արտահայտվում է «Ե» տառով, իսկ հուլիսը, որպես յոթերորդ ամիս՝ «Հ» տառով: Ձեռագրերում ընդօրինակելու ժամանակ միանգամայն հնարավոր է այդ երկու տառերի շփոթումը: Սկզբնաղբյուրը եղել է Սմբատի գործը, ապա՝ հիշատակարանը, որից օտվել է Հ. Ղ. Ալիշանը: Այսպիսով, եթե «Ե» գրի տեղ ընդունենք «Հ», կլինի մեր 7-րդ ամիսը՝ հուլիսը, այն ամիսը, ինչպես ցույց են տալիս Հ. Մ. Չամչյանն¹¹ ու Հ. Աճառյանը¹², սակայն առանց ամսաթվի: Նշանակում է, Սմբատի և հիշատակարանի տվյալներով, Գրիգոր Տղան վախճանվել է 1193 թվականի ոչ թե «Ե», այլ «Հ» ամիս 16-ին: Այսպիսով պարզվում է, որ Գրիգոր Տղան վախճանվել է 1193 թվականի հուլիսի 16-ին:

Այնուհետև, ըստ Չամչյանի, Գրիգոր Տղան թաղվել է Հռոմկլայում¹³: Բայց այդպես չէ: Գրիգոր Տղան հունիսի վերջերին գնաց Սիս՝ Լեոնի մոտ: Այնտեղ հուլիսի սկիզբներին հիվանդանում է և նույն ամսի կեսերին էլ վախճանվում: Սիս քաղաքից մինչև Հռոմկլա բավականին երկար, շաբաթների ճանապարհ էր այն ժամանակվա հաղորդակցության միջոցների համար, հետևաբար հնարավոր չէր այդքան՝ երկար ճանապարհով կաթողիկոսի մարմինը փոխադրել, այն էլ ամռանը: Չամչյանը չի հաղորդում, թե ո՞րտեղից է վերցրել իր տվյալը, բայց մեր պատմագիրներից շատերը վկայում են, որ Տղայի մարմինը ամփոփված է Սիս քաղաքից ոչ հեռու, Դրազարկի նշանավոր վանքում: Սամվել Անեցին, պատմելով Գրիգոր Տղայի եկեղեցական շինարարության և նոր վանքեր կառուցելու մասին, վերջում գրում է. «Եւ զկնի ինքն ևս փոխի մահուամբ առ

¹⁰ Հ. Ղ. Ալիշան, «Սիսուան», համագրութիւն հայկական Կիլիկիոյ», Վենետիկ, 1855, էջ 532:

¹¹ Հ. Միխայել Վ. Չամչեանց, «Պատմութիւն հայոց», Գ, Վենետիկ, 1784, էջ 159:

¹² Հրաչյա Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Ա, Երևան, 1951, էջ 562:

¹³ Հ. Մ. Չամչեանց, նշված աշխատությունը, Գ, էջ 159:

⁸ «Թուղթ ընդհանրական», էջ 490—491:
⁹ «Տարեգիրք...», էջ 106:

Քրիստոս և կայ հանգուցեալ ի սուրբ ուխտն Դրագարկ»:

Սմբատ պատմիչը նույնպես թվելով Գրիգոր Տղայի կատարած աշխատանքները, եզրափակում է, թե «Քաղեցաւ ի Դրագարկ»¹⁴:

Գրիգոր Տղան ապրել է շուրջ 70 տարի, վախճանվել է 1193 թվականի հուլիսի 16-ին և թաղվել է Դրագարկում:

Գրիգոր Տղայի գործունեությունը չի սահմանափակվել միայն կրոնական, հայրապետական գործերով: Նա եղել է միաժամանակ հասարակական, պետական գործիչ և Կիլիկիայի հայկական իշխանության սյուններից մեկը: Ոչ Մլեհժը, ոչ Ռուբեն Բ-ը, և ոչ էլ Լևոն Բ-ը պետական, մանավանդ արտաքին քա-

ղաքականության վերաբերող որևէ լուրջ գործի չէին ձեռնարկում, առանց Գրիգոր Տղայի խորհուրդների և մասնակցության: Իր նախնիների նման այս կաթողիկոսը նույնպես ամենից առաջ զբաղվեց վանքերի ու վանական դպրոցների շինարարությամբ և բարեկարգությամբ: Հատուկ հանգստարան կառուցեց Պահլավունի կաթողիկոսների աճյունների համար՝ որպես երախտագիտության հուշարձան: «Այս Տէր Գրիգորիս արկանէ հիմն ի Կլայն, և շինէ հոյակապ եկեղեցի ի նմանութիւն արեւելից տաճարացն. պատրաստեալ ի նմա զդիրս երկուց սուրբ լուսաւորչացն զհօրեղբարց իւրոց, Տէր Գրիգորիսի և Ներսէսի: Հանէ և Մովուց զնշխարս մեծին Վկայսերի զքեռոյն Ապիրատայ հաւուն իւրոյ զՏէր Վահրամայ և դնէ ընդ երկուց լուսաւորչաց»¹⁵:

¹⁵ «Տարեգիրք...», էջ 106:

(Շարունակելի)

¹⁴ Սամուէլ Անեցի, էջ 139: